Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024 թ. նոյեմբերի 26-ին կայացած թիվ 7 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. նոյեմբերի 26-ին կայացած թիվ 7 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 28-ը:

Օրակարգ՝

1. Հանդիպում ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ:
2. Ընթացիկ հարցեր:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ գիտխորհրդի ընդլայնված նիստ, որին ներկա էին ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտքարտուղար Մերի Հովհաննիսյանը, Կենսաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական կազմը, ինչպես նաև ուսանողներ:

Ֆակուլտետի աշխատակիցների կողմից կազմակերպվել էր ֆակուլտետում գործող ամբիոնների և Կենսաբանություն ԳՀԻ գործունեությունը լուսաբանող պաստառների ցուցադրում: Պաստառների վրա ներկայացվել էին ամբիոնների հիմնադրման և գիտական ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ուսանողների կրթությունը շարունակելու հնարավորությունների և շրջանավարտների աշխատանքային հեռանկարների մասին հակիրճ տեղեկություններ:

Գիտական խորհրդի նիստը մեկնարկեց ԵՊՀ ռեկտոր պարոն Հովհաննիսյանի ելույթով: Նա անդրադարձավ նախորդ տարվա հանդիպման ժամանակ բարձրացրած հարցերին՝ ԵՊՀ-ի ուսումնական հանգրվանների վերանորոգման և վերակառուցման աշխատանքների կազմակերպմանը, մասնավորապես Հանքավանում գտնվող ուսումնական հանգրվանին, մեկ անգամ ևս նշելով, որ շինարարական աշխատանքների կազմակերպումը ծախսատար է և առաջարկեց մասնավոր սեկտորի ներգրավումը տվյալ գործընթացին: Ռեկտորի կողմից նշվեց, որ ԵՊՀ-ում շարունակվում են լաբորատորիաների վերանորոգման և արդիականացման աշխատանքները, ինչը միտված է ուսումնագիտական գործունեության որակի արդյունավետության բարձրացմանը: Կարևորվեց նաև այն հանգամանքը, որ ներկայումս վերանայվում են ԵՊՀ ամբողջ տարածքի անվտանգային և հակահրդեհային համակարգերը, առաջ է քաշվել նաև ԵՊՀ ջերմոցը վերանորոգելու հարցը:

Ռեկտորը իր խոսքում արձանագրեց, որ ԵՊՀ-ն առաջին անգամ ընդգրկվել է «Times Higher Education»-ի՝ համալսարանների համաշխարհային վարկանիշավորման

ցանկում, ընդգծելով, որ աշխարհի լավագույն բուհերի վարկանիշավորման աղյուսակում տեղ գտնելը կնպաստի հստակ ուղղություններով բարեփոխումներ կատարելուն: Խոսվեց նաև այն մասին, որ ԵՊՀ-ն իր քաղաքականությամբ շարունակում է խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ներառված բարձր վարկանիշային հանդեսներում գիտական հոդվածների հրապարակման գործընթացը, կարևորեց նաև արտասահմանցի ուսանողների, դասախոսների թվի ավելացմանը ուղղված աշխատանքները:

Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ընդհանուր տեղեկություններ ԵՊՀ-ում իրականացվող գիտակրթական աշխատանքների վերաբերյալ: Ռեկտորը նշեց, որ կենսաբանության ֆակուլտետը աչքի է ընկնում բազային, թեմատիկ և միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող թեմաների քանակով և կատարած աշխատանքների ծավալով: Ռեկտորը փաստեց, որ նմանօրինակ ծրագրերի շնորհիվ ֆակուլտետը համալրվում է ժամանակակից սարքավորումներով, ինչն էլ հնարավորություն է տալիս էլ ավելի զարգացնելու գիտահետազոտական որոշ ուղղություններ:

Խոսվեց նաև այն մասին, որ միջազգային հավատարմագրման գործընթացը, որը սկսվել է ԵՊՀ-ում, կնպաստի միջազգայնացմանը՝ խթանելով ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը, կբարձրացնի համալսարանի վարկանիշը՝ դրանք դարձնելով առավել գրավիչ հատկապես օտարազգի դիմորդների համար: Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց նաև բուհում իրականացվող ուսումնական և գիտական որոշ բարեփոխումների ընթացքը, խոսեց ոչ միայն վերջին տարիներին միջազգային հարթակներում Երևանի պետական համալսարանի ձեռք բերած հաջողությունների, նոր համագործակցությունների, այլև ներբուհական կրթական ու հետազոտական ծրագրերի զարգացման ու նորարարական նախաձեռնությունների մասին, ինչը խիստ կարևորվում է ԵՊՀ–ի՝ որպես գիտակրթական կառույցի առաջատար լինելու հարցում:

Կենսաբանության ֆակուլտետում ուսումնառությանն առնչվող որոշ հարցերի, ֆակուլտետի կրթական և գիտահետազոտական աշխատանքների, հրատարակչական գործունեության և միջազգային տարաբնույթ համագործակցությունների մասին խոսեց նաև կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կարեն Ղազարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի զարգացման առանցքային ուղղությունները, կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների բարելավմանն ուղղված աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Ս. Գ. Նանագյուլյանը, կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի ուսանող անդամներ Ռուզաննա Հարությունյանը, Լարիսա Նավասարդյանը և պրոֆեսորադասախոսական կազմի անդամները: Ելույթ ունեցողները նախ

շնորհակալություն հայտնեցին պարոն Հ. Հովհաննիսյանին նմանատիպ հանդիպումներ կազմակերպելու, ինչպես նաև կատարած աշխատանքների համար, որից հետո բարձրաձայնեցին որոշ հարցեր ուղղված գիտակրթական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, կրթական ծրագրերի բարելավմանը, հայալեզու գրականության ավելացմանը, խոսվեց նաև գնման որոշ ընթացակարգերի մասին: Ուսանողները բարձրաձայնեցին ամառային պրակտիկայի կազմակերպմանն ուղղված և գործող օտարալեզու դասընթացների վերաբերյալ հարցեր:

Հնչաց հարցերին տրվեցին սպառիչ և հիմնավոր պատասխաններ, ինչպես ռեկտորի՝ Հ. Հովհաննիսյանի, այնպես էլ կենսաբանության ֆակուլտետի դեկան, Կ. Ղազարյանի կողմից:

Ելույթ ունեցողները նշեցին, որ նմանատիպ հանդիպումների ժամանակ բարձրացրած հարցերի լուծումը կնպաստի բարձրորակ կրթական և հետազոտական աշխատանքերի ապահովմանը, նորարարությունների իրականացմանը, որակյալ կադրային ներուժի ստեղծմանը և ընդլայնմանը:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, եզրափակելով ելույթը, ընդգծեց որ, հիմնական խնդիրների շուրջ համատեղ աշխատելու և նշանակալի արդյունք գրանցելու տեսանկյունից նմանօրինակ հանդիպումները ունեն կարևորագույն նշանակություն:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ. Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի. Վ. Շահազիզյան